

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՇԱՆՏ ԱՐԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

ՆՈՒՅՆ ԱՆՏԻԿ ՆԵՂԻՆԱԿՆԵՐԸ ԳՈՐԾԻ ԱՌԱՔԵԼՈՅՈՒՄ
ԵՒ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՂԹԵՐՈՒՄ¹

Պողոս առաքյալի եւ Ղուկաս ավերարանչի՝ դասական հելլենիստական կրթության փաստն այսօր այլեւս շարքէին կարող է զարմացնել՝ հաշվի առնելով նրանց երկուսի կիրառած ճարտասանական եւ կառուցվածքային հնարքները, որոնց արմատները գալիս են հին հունական եւ հելլենիստական ավանդույթներից: Այս իմաստով բավական առարկա գրականություն է սրբեղծվել, մանավանդ սուրբգրային ուսումնասիրությունների ոլորտում: Սակայն հարկապես հնարքերի եւ դիպարկել Պողոսի եւ Ղուկասի կողմից վկայակոչված հունական թարգմանիչների ու փիլիսոփաների այն խոսքերը, որոնց երկերից արված քաղվածքները շարք հաճախ շրջանառության մեջ են դրվել իբրեւ հենց իրենց՝ առաքյալի ու ավերարանչի մտքեր: Այս առումով հարկապես կարեւոր ենք համարում հնարավորինս համառոտակի ներկայացնելու նորկարարանյան այս երկու հեղինակների երկերում առկա հույն անփոփոխ հեղինակների երկերից որոշ հարվածներ:

Առաջին երկու հարվածները Գործք Առ. Ե. 39 եւ ԺԲ. 7/ԺԶ. 26 պատումներն են, որտեղ մեջբերված են Եւրիպիդեսի «Բաքոստիիններ» ողբերգությունից մի քանի հարկանշական բառակապակցություններ եւ արտահայտություններ (տր. 45, 325, 1255 եւ տր. 443-448)²: Քննարկենք այդ վկայակոչումներն առանձին-առանձին:

Գործք Ե. 39-ում առկա է «θεομαχοι-ասպետամարտիկ» բառը, որը Գամաղիելն իբրեւ ողջամտության հորդոր ուղղում է հրեից ծերակույրին: Այս բառը մեջբերված է Եւրիպիդեսի «Բաքոստիիններ» երկի 45-րդ տողից, որտեղ կիրառվող համարներսփռ գրեթե նույնն է՝ «զի մի ըստ այդմ ասպետամարտիկ գրանիցիք»: θεομαχος բառը մի քանի անգամ կիրառված է «Բաքոստիիններ»-ում՝ տր. 325, 1255:

Գործք ԺԶ. 26-ում նկարագրված բանտի տեսարանն իր կիրառած բառակապակցություններով գրեթե բառացիորեն մեջբերում է «Բաքոստիիններ»-ի 443-448 հարվածից.

1 Նմուր. նաեւ **Շահն արեղա Անանյան**, «Ավերարանական դրվագներ անփոփոխ ոսկեդարի հեղինակների երկերում». «Ժշմիածին», 2010, է. էջ 6-11:

2 Առկա ուսումնասիրությունների առավել մանրամասն վերլուծության համար տե՛ս **R. Renehan**, "Classical Greek Quotations in the New Testament", *Orientalia Christiana Analecta* 195 (1973), էջ 16-45:

3 «Բաքոստիիններ» երկի հղումները տալիս ենք ըստ հետեւյալ հրատարակության՝ «Bacchae of Euripides», Loeb Classical Library 11, vol. III, tr. by A. S. Way, London 1971: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **W. Nestle**, «Anklänge an Euripides in der Apostelgeschichte», *Philologus* 59 (1900), էջ 46-57:

Բարքստիկներ, Կղք. 443-448

Գործք Առաքելոց, ԺԶ. 26

ἄς συνήρπασας κἀδησας ἔν δεσμοῖσι πανδήμου στέγης... ...αὐτόματα δ' αὐταῖς δεσμά...	ἄφνω δὲ σεισμός ἐγένετο μέγας ὥστε σαλευθῆναι τὰ θεμέλια τοῦ δεσμιωτερίου...
--	--

Երիպիդեսի մեկ այլ երկից՝ «Մեդեայից» արված ակնարկ-մեջբերում (Կղք. 1077-1080)⁴ կարելի է զարդանշել Նոմ. Է. 15-ում.

ἄλλ' ὃ μισῶ τοῦτο ποίω (Նոմ. Է. 15) ἄλλὰ νικῶμαι κακῶς (Մեդեա, Կղ. 1078)
 «...այլ գոր արեամն՝ զայն գործեմ»։ «...այլ ինչ որ վար է, այն եմ գործում»։

Գործք ԺԷ. 28-ում Աթենքի նշանավոր Արիստագոս վայրում Պոդոս առաքյալի արքայա-սանիւծ ճառի մեջ նույնպես առկա է մեջբերում անտիկ հունական աշխարհի փիլիսոփա-աստղագետ Արարոս Սոլացու «Ֆենոմենա» երկից⁵, որից մի հարված ունենր նաև գրա-բար թարգմանությամբ։

Գործք ԺԷ. 28	Արարոս Սոլացի, «Ֆենոմենա» ⁶
ὥς καὶ τινες τῶν καθ' ἡμᾶς ποιητῶν εἰρή κασιν, τοῦ γάρ καὶ γένος ἐσμέν.	πάντη δὲ Διὸς κεχρημέθα πάντες. τοῦ γάρ καὶ γένος ἐσμέν.
...զի նովա կեամք եւ շարժիմք եւ եմք, որպէս ոմանք ի ձերոց ճարարաց ասացին, թէ նորա իսկ ազգ եմք⁷։	

Նաջորդ բավական փարածված եւ հայրնի արքայապետությունն է «խիստ է քեզ ընդ-դէմ խցանի արացել» առածը, որն ընդամենությամբ է սրացել նաև հայերենում։ Այն մեջ-բերված է Գործք. ԻԶ. 14 համարում (հմմտ. նաև Թ. 5)՝ իբրև Նիստուի կողմից Դամասկոսի ճանապարհին Սոդոսին փրված զգուշացում։ Առածը հայրնի է հույն դասական թարգ-մանքներ Պինդարոսի եւ Էսքիլոսի երկերից.

4 Նոմոները փրվում են ըստ հերեյալ հրապարակության՝ “The Medea of Euripides”, Loeb Classical Library, 12, vol. IV, tr. by. A. S. Way, London 1964:

5 Այս մասին ավելի մանրամասնորեն րեն՝ Ն. Բարթիկյան, «Արարոս Սոլացու ΔΙΟΣΗΜΕΙΑ կամ ΠΡΟΓΝΩΣΤΙΚΑ աշխատության հին հայերեն թարգմանությունը», *Նախ-Բյուզանդական հեղափոխություններ*, հր. 1, Աճեմյան մաթեմատիկա Գ/1, Երևան, 2002, էջ 113-146: Արարոսի «Ֆենոմենա» երկը շար սիրված է եղել. այն լավիներեն են թարգմանել Յիցերունը, Կեսար Գեորգիանիսը, Ռուֆոս Փետրոս Ավինետը, հմմտ. Ն. Բարթիկյան, էջվ. աշխ., էջ 116: Արարոսի «Ֆենոմենա» աշխատությունը բաղկացած է 1154 հեքսամետր-արձակ փողից եւ բաժանվում է երկու մասի։ Առաջին մասը (1-732-րդ փող) կոչվում է «Ֆենոմենա», իսկ երկրորդը՝ Prognostica կամ Diosemeia: Գրաբար թարգմանությամբ պահպանվել է միայն երկրորդ հարվածը:

6 Մեջբերումն ըստ հերեյալ հրապարակության՝ E. Maass, *Arati Phaenomena*, Berolini, 1853, էջ 1:

7 Արարոսի՝ Գործք ԺԷ. 28-ում արված մեջբերման գրական-փիլիսոփայական գուգահեռների եւ առանձնահատկությունների մասին առավել մանրամասնորեն րեն՝ L. Legrand, “Aratos est-il aussi parmi les prophètes?”, P. Grelot (éd.), *La vie de la Parole*, Paris: Desclée, 1987, էջ 246-249:

Պինդարոս, Պյութիա 2, 94-95⁸ **Էսքիլոս**, Պրոմեթեոս 325⁹ **Էսքիլոս**, Ագամեմոն 1624

φέρειν δ' ἐλαφρῶς ἔ παυχένιον λαβόντα ζυγόν ἀρήγει· ποτὶ κέντρον δέ τοὶ λακτιζέμεν τελέθει ὁ λισθηρὸς οἶμος·	πρὸς κέντρα κῶλον ἔ κτενεῖς;	πρὸς κέντρα μὴ λάκτιζε, μὴ παίσσας μογῆς
--	---------------------------------	---

Գործք Առ. ԻԶ. 14

σκληρόν σοι πρὸς κέντρα λακτίζειν;

Պոդոս առաքյալի՝ հույն անփրկ թափերգաների երկերին և դրանցից քաղված ու շրջանառության մեջ դրված ասացվածքներին ծանոթությունը նույնպես վաղուց անփրկվելով է Գործք Առաքելոցում արձանագրված նրա ճառերում և թղթերում: Ամենահայրենիները երկուսն են, որոնց առկայությունը ժամանակի միջերկրածովյան մշակույթի մեջ արդեն հասցրել էր դառնալ իբրև ժողովրդական բառ ու բանի մեջ շրջանառվող առած: Խոսքը մասնավորապես Մենանդրոսի և Կալլիմաքոսի երկերի մասին է, որոնց հեղինակների մասին Պոդոսն ինքն է ակնարկում¹⁰:

ա. Մենանդրոս, Թախս, հայր.¹¹,

բ. Կալլիմաքոս, Օրհներգ Զևսին¹²,

ա. Ա. Կորնթ. ԺԵ. 33

բ. Տիբուս Ա. 12

ա. φθείρουσιν ἥθη χρησθ' ὁμιλῖαι κακαί; «...վաղ խոսքերն ապականում են բարբերը»:	ա. φθείρουσιν ἥθη χρηστὰ ὁμιλῖαι κακαί; «ապականեն զբարս քաղցուս բանք չար»
բ. Κρητες ἀεὶ ψεύσται; «...կրեդացիք, որ մշտապես ստախոս են»:	բ. Κρητες ἀεὶ φεύσται, κακὰ θηρία, γαστέρες ἀργαί; «կրեդացիք հանապազատությք, չարածճիք, դափարկապարփք»

Վերջապես պետք է նշել հունական դասական մշակույթի մյուս մեծի՝ Պլատոնի «Ջալագովություն Սոկրատի» երկից Պոդոսի արած երկու հղումները Ա. Կորնթ. Ը. 2 և Գաղ. Զ. 3 համարներում: Նարկանշական է, որ երկու դեպքում էլ խոսքը մասնավորապես իմաստունի՝ խոնարհության ինքնագիրակցման մասին է՝ արքանապետված Սոկրատեսի բերանով:

8 Stn "Pindar", tr. by Sir J. E. Sandys, Loeb Classical Library 56, London 1964, էջ 180:

9 Stn "Aeschylus", tr. by H. Weir Smith, Loeb Classical Library 145, London 1963:

10 Նման. «Ասաց ոմն ի նոցանի՝ իսկանց իսկ մարգարէ» (Տիբուս Ա. 12):

11 Menander, Thais frag., tr. by F. C. Allinson, Loeb Classical Library 132, p. 356, London 1964.

12 Callimachus, Hymne to Zeus, Loeb Classical Library 129, tr. by A. W. Mair, London 1969, p. 36.

ա. Պլատոն, Զարազովություն, 21 D¹³

ա. Ա. Կորնթ. Ը. 2

բ. Պլատոն, Զարազովություն, 41 E¹⁴

բ. Գաղ. Զ. 3

α. ὅτι ἀκούοντες χαίρουσιν ἐξ ἐταζομένοις τοῖς οἰομένοις μὲν εἶναι σοφοῖς, οὐδὲ οὐ;	ա. εἰ τις δοκεῖ ἔγνωνά τι, οὐπω ἔγνων καθὼς δεῖ γινῶναι; «Եթե՛ որ կամիցի գիտել ինչ, չե՛ս ես գիտաց որպէս արժան է գիտել».
բ. καὶ οἶονταί τι εἶναι ὄντες οὐδενὸς ἄξιοι;	բ. εἰ γὰρ δοκεῖ τις εἶναι τι μὴδὲν ὧν, φρεναπατᾷ ἑαυτόν; «Եթե՛ համարիցի որ լինել ինչ, ես չիցե՛»

Անշուշտ, վերաբերյալ թեման կարելի է անվերջ ծավալել՝ հաշվի առնելով մանավանդ իմաստասիրական և գրական-ժանրային ընդհանրությունները, որ նորկրականության գրվածքները հանդես են բերում անսխալ գրական երկերի հետ համեմատելիս: Սակայն մենք այսպիսի բավարարվում ենք հնարավորինս բառացի մեջբերումները մարմանակալով: Նույնպես հեղինակական գործող ալիքի տակ գտնվող վաղ քրիստոնեական համայնքները ոչ թե պարզապես կերպով ծանոթ էին և մեջբերում էին հենց հույն դասական հեղինակներին, այլ ավելի շուրջ քաջարեղյակ էին ժամանակի հասարակության մեջ այդ խոսքերի ու մեջբերումների առածային կիրառությանը: Ավելին, դրանցից ոմանք հեթանոսական միջավայրում կիրառվում էին իբրև աղոթքի կամ բարեմաղթանքի տարածված ձև, ինչպես, օրինակ, Արարես Սուրբու երկից մեջբերումը, որը, ըստ գրաբար շրջա մեկնություններից մեկի, պարկանում էր Տիմոթեոս անունով մի թարգմանչի գրչին¹⁵: Ներկայումս, պարահական չէ, որ իր ժամանակի մարտիկի հունարենով գրված նորկրականության երկերում դասական հեղինակներից արված մեջբերումները հայտնվում են ոչ այնքան դասական համարեքստում. նկարի ունենք ժողովրդական լեզվով, *kyrielle* անունն սրացած հունարենով տարածվող քրիստոնեական քարոզը: Մյուս կողմից, սակայն, Պողոս առաքյալի նամակներում, որտեղ արդեն ձևավորված է նրա աստվածաբանական միտքը, առկա են փիլիսոփայական մեջբերումներ Պլատոնից և Մենանդրոսից: Այսպիսով, երկու դեպքում էլ հին հունական դասական կրթությունը՝ *paideia*-ն, արդեն նորկրականության ժամանակներից սերտորեն առնչվում էր քրիստոնեական մարտի ու ոգեկանությանը¹⁶: Այս պարվաստումը շարունակվեց նաև հետագա դարերում՝ առավել զարգանալով և ծաղկելով հարկապես առաջին հինգ դարերի քրիստոնյա հայրերի երկերում: Այսպիսի արդեն հունական *paideia*-ն դառնում էր կրթական ուղի քրիստոնյա մանուկների և երիտասարդների կրթության գործում՝ նաև անսխալ մշակույթի հանդեպ հանդուրժողականություն սերմանելով առաջին քրիստոնեական համայնք-

13 Plato, *Apology*, 21 D, Loeb Classical Library 36, London 1971, tr. by. H. N. Fowler, intr. By. W. Lamb, p. 118-119.

14 Plato, *Apology*, 41 E, Loeb Classical Library 36, tr. by. H. N. Fowler, London 1971, p. 144.

15 Տե՛ս M. Dibelius, "Paulus auf dem Aeropag". *Aufsätze zur Apostolgeschichte*, FRLANT 60, Göttingen 1961, էջ 50; T. Zahn, *Die Apostolgeschichte*, KNT 5, Leipzig 1921, էջ 625:

16 Տե՛ս W. Jaeger, *Early Christianity and Greek Paideia*, Cambridge: Massachussets 1961, էջ 112-113:

ների անգիջում ոգով ապրող քրիստոնեական եկեղեցիներում: Արդեն Պոլմես Ալեքսանդրացին, Ռոզինեսը, Ներոնիմոսը, Կապադովկյան հայրերը, Փոպ պապրիարքը և եկեղեցական այլ հայրեր ու ուսուցիչներ քաջատեղյակ էին Նոր Կրակարանում առկա հունական դասական գրականությունից արված այս մեջբերումներին: Սակայն նրանցից շատերն այս փաստին լուռ հավանությամբ էին անդրադառնում (*argumentum in silencio*)՝ չնշելով հեթանոս հեղինակների անունները և բավարարվելով միայն մեջբերված տեքստերի մեջ աստվածայինի և Աստծո մասին մտքերը վերհանելով:

Նուսկ, կարող ենք մի քանի խոսքով եզրակացնել, որ՝

ա. Նոր Կրակարանն առանձին, ներփակ մի գրություն չէր, որ ստեղծվում էր ժամանակի գրական-մշակութային կյանքից անկախ.

բ. Ա. դարի մշակութային կյանքի որոշակի արտահայտումն են նաև Նոր Կրակարանում ուղղակի կամ անուղղակի կերպով մեջբերված հունական դասական գրականության և փիլիսոփայության տարբեր հեղինակների երկերից արված մեջբերումները.

գ. Նոր Կրակարանում այդ մեջբերումները կամ արդեն ընդանիություն ստացած առածի և դարձվածքի տեսքով են, կամ ուղղակի մեջբերումներ են.

դ. վերջապես, կարելի է հունական դասական գրականությունից Նոր Կրակարանում առկա չորս ուղղակի կամ բառացի մեջբերում առանձնացնել՝ առանց թերագնահատելու նաև մի քանի տասնյակի հասնող հնարավոր անուղղակի կամ փոխառյալ իմաստային մեջբերումները: